ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2023թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տրանսպորտի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Տրանսպորտի վարչություն				
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	Գործավար	1	248,200		248,200
-	**Հասարակական տրանսպորտի կարգավորման բաժին**				
4	Բաժնի պետ	1	408,000		408,000
5	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
6	Առաջատար մասնագետ	2	282,200		564,400
-	**Երթևեկության կառավարման բաժին**				
7	Բաժնի պետ	1	408,000		408,000
8	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	Առաջատար մասնագետ	4	282,200		1,128,800
	Ընդամենը՝	**15**			**5,171,400**

2) «Ι.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողում «658.5» և «224,443,780» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «664.5» և «226,143,780» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «1958.5» և «609,024,580» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «1964.5» և «610,724,580» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տրանսպորտի վարչությունը ունի առաջնային նշանակություն, քանի որ վարչությունը վերահսկում է Երևան քաղաքում իրականացվող ճանապարհային երթևեկության կազմակերպման, ինչպես նաև հասարակական տրանսպորտի կարգավորմանն ուղղված բոլոր տեսակի աշխատանքները, որոնք իրականացվում են համայնքային բյուջեի ծրագրերով, ինչպես նաև քաղաքապետին պատվիրակված ծրագրերի շրջանակներում:

Երևան քաղաքի ավագանու 29.10.2018 թվականի թիվ 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում Տրանսպորտի վարչությունը:

Կարևորելով տվյալ ոլորտի դերն ու նշանակությունը, նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նույնպես բարձրացնել Տրանսպորտի վարչության դերը: Վարչությունում հաստիքների ընդհանուր թիվը 9 է՝ վարչության պետ, պետի տեղակալ 1 /մեկ/, գործավար 1/մեկ/, բաժնի պետ՝ 2/երկու/, գլխավոր մասնագետ՝ 3/երեք/, առաջատար մասնագետ՝ 1/մեկ/: Վարչությունը նշված կազմով իր կանոնադրությանը համապատասխան նպաստում է այն խնդիրների իրագործմանը, որոնք բխում են տրանսպորտի հարցերի բնագավառում իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից:

Վարչության գործառույթների մեջ է մտնում գնման հայտի ներկայացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, Երևան քաղաքի վարչական տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպում, ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպում, տաքսի մեքենաների կայանատեղի կազմակերպում, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների՝ լուսացույցների սպասարկման աշխատանքների վերահսկում, ճանապարրհային նշանների տեղադրման վերահսկում, ճանապարհային գծանշումների իրականացման վերահսկում, ճանապարհային երթևեկության սխեմաների կազմում, տրանսպորտային միջոցների ինտենսիվության ուսումնասիրում, ճանապարհային երթևեկության սխեմաներում երթևեկության փոփոխության իրականացում, հասարակական տրանսպորտի կառավարում, երթուղիների բաշխում, հասարակական տրանսպորտի կանգառի տեղերի կազմակերպում, երթուղային ցանցի մշակում, հասարակական տրանսպորտի աշխատանքի վերահսկում:

Հաշվի առնելով, որ ներկայումս Երևանի քաղաքապետին, որպես պատվիրակված լիազորություն, պատվիրակվել է Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության կազմակերպման գործընթացը, համաձայն որի իրականացվում է Երևան քաղաքի

վարչական տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, լուսացույցներ, գծանշումներ և այլն) տեղակայման, կատարման միջոցով, ինչպես նաև այն հանգամանքը, որ Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակում մշակված նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում միասնական տոմսային համակարգի ներդրումը, հասարակական տրանսպորտի հավաքակազմի համալրման նպատակով ձեռքբերված նոր շարժակազմերի հետագա շահագործման կազմակերպումը ենթադրում է լրացուցիչ աշխատանքների և միջոցառումների իրականացում, ինչի արդյունքում զգալիորեն մեծանում են այդ գործառույթներից բխող աշխատանքների ընդհանուր ծավալները, անհրաժեշտություն է առաջանում աշխատակազմի տրանսպորտի վարչության երթևեկության կառավարման և հասարակական տրանսպորտի կարգավորման բաժինները համալրել նոր՝ մասնագիտական համապատասխան որակավորմամբ հնարավոր անհրաժեշտ քանակությամբ մասնագետներով:

Հասարակական տրանսպորտի կարգավորման բաժին	
Առաջատար մասնագետ	2
Երթևեկության կառավարման բաժին	
Գլխավոր մասնագետ	1
Առաջատար մասնագետ	3

Վարչության հաստիքների ընդհանուր թիվը 9 է և հաշվի առնելով աշխատանքների նմանօրինակ ծավալը, ինչպես նաև հետագայում առաջացող հրատապ լուծում պահանջող աշխատանքները, նշված ոլորտի գործունեության և կառավարման արդյունավետությունը, ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման և հեռանկարային զարգացման կանոնակարգերի մշակման գործառույթների ապահովման հանգամանքով վարչությունը առաջարկում է կատարել վերոնշյալ վերակազմակերպումը և վարչությունը համալրել ևս 6 հաստիքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**